

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ԷՋ

1972 թվականին Երևանի Ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման ժամանակ ինձ նույն եկեղեցու ծխականներից Ասատուր Միրաղյանն ասաց. «Տեր հայր, ես բնիկ Վանի շրջանի Շատախ գյուղից եմ, ծնված 1889 թ.: 1896 թ. կոտորածների ժամանակ շատ-շատերի հետ ինձ էլ փախցրել են Վան, և որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո տեղափոխվել եմ Աբաղինի շրջանի Խաչվան գյուղ, մինչև 1915 թ.: Երբ ռուսական բանակները գրավեցին Վանը, հայերը հնարավորություն ստացան գյուղից գյուղ շրջելու և ողջ մնացած հայ որբերին հավաքելու և իրենց խնամքի տակ առնելու: Լքված գյուղեր էին, լքված տներ:

Զորավար Անդրանիկի հաղթական գրոհներից մեկի ժամանակ Աբաղայի ցեղապետ քուրդ Մահմուդ բեկը փախել էր: Նրա կանանցից մեկը հայ էր՝ Զավահիր անունով, որն իր մոտ երկար ժամանակ գաղտնի պահել էր Քրիստոսի մի յուղաներկ պատկեր և Ս. Սարգսի մի հարթաքանդակ, ազնիվ օնիքսի վրա փորագրված: Զավահիրը թողել էր նաև մի գրություն, որով աղերսում էր հանդիպող հայերին՝ այս երկու սրբությունները հասցնել Հայաստան»:

Ասատուր քեռին երբ մի քանի հայերի հետ մտնում է բեկի լքված տուն, տեսնում է նկարն ու քանդակը: Նա ոչինչ չի վերցնում բեկի տնից, այլ միայն այս երկու սրբությունները, և Վանի գաղթականության հետ Հայաստան է բերում (1918 թ.): Քրիստոսի նկարը հանձնում է Ս. Էջմիածին, Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսին, իսկ քանդակը պահում է իր մոտ մինչև 1972 թ.: «Քանդակի հետ շատ եմ կապված,—ասաց նա,—ճանապարհի հազար ու մեկ դժվարությունները հաղթահարելով տեղ եմ հասցրել, շատերն են առաջարկել ծախել, բայց իմ ուխտն է՝ այն անվթար հասցնել Երևանի Ս. Սարգիս եկեղեցի, որպեսզի դրվի նրա որևէ որմնախորշում՝ ի հիշատակ գալիք սերնդի»:

Պարզ, հավատավոր մի հայ մարդու ուխտ, հայի լավատեսություն, պայծառատեսություն, հույսով լեցված հայի սիրտ, հավատ հողի, ժողովրդի և հայրենի երկրի հանդեպ:

Հիմա Ասատուր քեռին հող է դարձել և քնած է հողի քնով՝ իր պարտքը կատարած մարդու խղճի ամենայն հանգստությամբ:

*

* *

Մի քանի վերլուծական խոսք Ս. Սարգսի հարթաքանդակի մասին:

Այն զետեղված է Երևանի Ս. Սարգիս եկեղեցու նոր մկրտարանի արևելյան պատի վրա, մկրտության ավազանի աջ կողմում, հատակից 2 մ 18 սմ բարձրության վրա: Հարթաքանդակի չափերն են 28 սմ×18 սմ, նյութը՝ դեղնասպիտակ օնիքս, մի կտոր, 6—7 կգ ծանրությամբ:

Խորանաձև հարթաքանդակը չունի քանդակված հատուկ շրջանակ:

Քանդակը ներկայացնում է Ս. Սարգիսը ձիու վրա, նրա ետևի մասում ձիու վրա է նրա որդի Մարտիրոսը: Երկուսով դիմադարձ նայում են դիտողին: Ձին չորս ոտքերով տրորում է չար վիշապին, որը պատկերված է մազմզոտ և այլանդակ գալարումների մեջ: Ձիու կեցվածքը հպարտ է և հաղթական: Ձիու շարժման մեջ նպատակասլացություն կա: Նրա ականջները սրված են, ինչպես վտանգի պահին: Ս. Սարգիսը աջ ձեռքով պահել է խաչազարդ նիզակը, որի ստորին ծայրը խրված է վիշապի կոկորդը: Նիզակի վերին մասը խաչ է, որի հիմքից քամուց ծածանվում է հաղթական դրոշը: Ս. Սարգիսը ձախ ձեռքով բըռ-

նել է ձիու սանձը և նստել նրա մեջքին լայնորեն փռված ծածկոց-թամքի վրա, որի եզրերը ոճավորված են ծոպերով: Հեծյալի ոտքերը երկարաճիտ կոշիկներով ասպանդակի մեջ են, ծնկին չհասած լայն ծալքավոր անդրավարտիքը հիշեցնում է երբեմնի Վանի, Շատախի, Մոկսի հայ գյուղացիների հագածը:

Ս. Սարգիս Զորավարի հարթաքանդակը օնիքսի վրա՝ բերված 1918 թվականին Վանից

Ս. Սարգսի հագինը կապա է, որը բարձրանում է մինչև վիզը և փակում դաստակները: Աչքերը կիսափակ են, երազային, քիթը՝ առնական, երեսը չորս կողմից երեսակալով ծածկված է, իսկ գլխավերևում սաղավարտանման թագ է, որը հիշեցնում է հայկական եկեղեցիների կաթողիկեները:

Նրա Մարտիրոս որդին գլխաբաց է, վերևում՝ հրեշտակը պահել է գառը, որը մարտիրոսվելու, զոհաբերության խորհրդանիշն է: Գառան կողքին ոճավորված կենաց ծառը է, մարտիրոսների արյամբ կյանքի նորոգության կենսահաստատ խորհրդանիշը:

Հարթաքանդակի ներքևում, ծաղկազարդերի արանքում, գրված է **Սբ. Սարգիս:** Տառերի ոճը շատ հին չէ: Ամբողջ հարթաքանդակը կարելի է բնորոշել որպես «Հաղթական երթ»: Հարթաքանդակի մեջ զբնպված դինամիկա կա. ձիու ոտքերը հարվածել են վիշապին և թափից վեր բարձրանալով և բարձրացնելով նաև հեծյալին հաղթական՝ կարծեք սահում են օդում: Բարու և չարի հազարամյակների վաղեմիություն ունեցող թեման (աշխարհի բոլոր ժողովուրդների մոտ արծարծված) մեզ ներկայացվում է քրիստոնեական զոհաբերության և կյանքի վերստին վերընձյուղման առումով:

Հարթաքանդակի անկեղծությունն է, որ մեզ հմայում է: Այն պարզունակ լինելուց հեռու է: Առկա է տաղանդավոր վարպետի ձեռքի շնորհքը:

Հարթաքանդակը ոճավորված է, բայց հեռու է մանրամասներով դիտողին թեմայից հեռացնելու միտումը: Ամեն ինչ կոնկրետ է, հավաքված, երկրորդական մանրամասներից մաքրված, որով և դիտողի մոտ ուժգնանում է պատկերաքանդակում տեղի ունեցող պայքարի խոր դրամատիզմը:

Հարթաքանդակը, ինչ խոսք, իր տեղի և կատարման առումով պատկանում է Վասպուրականի հարուստ ավանդույթներ ունեցող քանդակագործական դպրոցին:

ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ավագերեց Երևանի Ս. Սարգիս եկեղեցու